ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

«03» հունվար 2025 թ. N 3-25

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի տնօրեն՝

Մարինե Աղաջանյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի միջև 19.12.2024թ-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիտարական և մաքրիչ նյութերի N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-1-5» մատակարարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը, այն համարում է լուծված 158461,80 (մեկ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր վաթսունմեկ դրամ ՀՀ դրամ, ութսուն լումա) չափով՝ պատշաճ

ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով՝ ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 151800 /հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 227700 /երկու հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ գումարները շահառուի 900008000664 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, հիմնվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի վրա, Պատվիրատուն ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ Ռ. ԽԼՈՅԱՆ